

14 JUL 2009

3579

**ՏԵՂԻՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՐԱՒՏԵՏԻՆ ԿԻՑ ՀԵՌԱՎԱՌ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲՅՈՒՐ**

Զեռագրի իրավունքով

ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԿՈՒՐՍ :

1930

ՍՈՎԱՉՐՈՒԹՅՈՒՆ № 2

Գ. ԵԴԻԼՅԱՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ՎԱՐՄՈՒՆՔԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ. ՖԱԿՏՈՐՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԱՈՅՏԱԼԱԿԱՆ ՖԱԿՏՈՐԻ ԴԵՐԸ.

1. Վարժունքի վրա աղդող գործոնները.
2. Սոցիալական ֆակտորի գերակշխո գերը.
3. Մարդկանց հասարակական վարժունքը պայմանավորված սոցիալական հանգամանքներով:

II. ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՏՈՐԻ ԴԵՐԸ.

- Ա. Մարմնի կոնստիտուցիան և կոնստիտուցիայի տիպերը.
- Բ. Ներքին սեկրեցիա.
1. Վահանաձև գեղձ, 2. Հիպոֆիզ, 3. Եպիֆիզ, 4. Մակրոբիկամային գեղձ, 5. Սեռական գեղձեր, 6. Ցեղրակացություն:

Գ. Նյարդային սիստեմ.

1. Նյարդային սիստեմի նշանակությունը.
2. Ռեֆլեկտոր աղեղ.
3. Ռեֆլեկտոր գործունեյության հիմնական սկզբունքները.
4. Գլխուղեղի կիսագնդերի կեղեվը.



5. Այդ կեզեկի նշանակությունը .
6. Լոկալիզացիայի տեսություն .
7. Կիսագնդերի գործունեյության հիմնական սկզբունքները .
8. Ժառանգական և ձեռք բերովի վարմունքներ .
9. Ենդոկրին և նյարդային սիստեմների համեմատական դնահատականը .

III. ԲՆՈՒԹՅԱՆ ՑԱԿՑՈՐ

1. **Корнилов:** Учебник психологии. 4-й. III, IV, V, VI и VII.
2. **Аркин:** Личность и среда—1927 р.

ՀԱՐԴՈՒ ՎԱՐՄՈՒՆՔԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՖԱԿՏՈՐՆԵՐԸ (ԳՈՐԾՈՆՆԵՐԸ)

I. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՖԱԿՏՈՐԻ ԴԵՐԸ

1. Վարմունքի վրա ազդող գործոնները .

Հոգեբանությունն ուսումնասությունը և մարդու վարմունքը չըջապահ մեջ, նշանակում ե , վոր այդ վարմունքը մեծապես պայմանավորված և չըջապահի գրգիռներով : Շըջապատը յերկու տեսակ գրգիռներ ունի՝ ներքին, վորը որդանիզմի (մարդու) մեջ և տեղափորված և արտաքին, որդանիզմից դուրս—բնությունը և սոցիալական միջավայրի դրգիռները :

Առաջինը—բիոլոգիականը-պայմանավորված և տվյալ անհատի որդանիզմի անատոմիական-ֆիզիոլոգիական առանձնահատկություններով, իսկ յերկրորդը—սոցիալականը-պայմանավորված և հասարակական հարաբերությունների այն ստրուկտուրայով (կառուցվածքով), որի մեջ ապրում ե տվյալ անհատը : Այսպիսով մարդու վարմունքը բիոռդիկական և սոցիալական բնույթ ունի, վորովհետև հենց ինքը մարդը փոսոցիալական արարած է : Յերկրորդական նշանակություն ունեղ բնության-կլիմայական գործոնի մասին հետո խոսք կլինի :

2. Սոցիալական ֆակտորի գերակշխող դերը .

Բիոլոգիական ֆակտորները (որդանիզմի կառուցվածքը, նյարդան սիստեմը, ներքին սեկրետիայի որգանները և այլն) մեծ նշանակություն ունեն, նրանք այն մեխանիզմներն են, վորոնցով պայմանավորում են կենդանի մարդու վարմունքի ձևելորը, բայց և այնպես, այդ եխանիզմները չեն տալիս վարմունքի ամրող բովանդակությունը : արդու բիոլոգիական առանձնահատկությունների մասին միայն այն արող ենք ասել, վոր նա բնույթյան մեջ ամենաբարդ կենդանին է իր իզիկական բնույթով : Թե նա ինչու գարձափ մարդ, (այսինքն հաստուկական կենդանի) վորը պատրաստում և արտադրության գործիքներ, գու ունի և այլն, դա արդեն դուրս և բիոլոգիայի սահմաններից և սուուղիայի բացատրության խնդիր է : Միայն սոցիոլոգիան և պարզում



մարդկային վարժունքների բովանդակությունը և նա յէ լուսաբանում մարդու բիոլոգիական կառուցվածքի բարդացման պատճառները:

Ինչո՞ւ մարդը դարձավ պսիխո-ֆիզիքական բարդ կառուցվածքի կենդանի: Միայն նրա համար, վոր կապիկից չտարբերվող մարդը, շրջապատին հարմարվելու պրոցեսի մեջ, դարձավ մի կենդանի, վորը շինում և պաշտպանության և աշխատանքի գործիքներ: Թաթը, վորն առաջ պաշտպանվելու համար բոնում եր քար կամ փայտ, հետո սպոռ բոն և պատրաստել նախ պաշտպանության և հետո աշխատանքի գործիքներ, աստիճանաբար դառնում ե ձեռք, իրեւ աշխատանքի որդան: Աշխատանքի պրոցեսների համար առաջնին վերջավորությունները գործածելու պատճառով մարդու հորիզոնական դիրքը փոխվում և ուղղահայցի, ձեռք և բերում ուղիղ, յերկու վոտքով քայլելու ընդունակություն: Այս բանը հսկայական փոփոխություններ առաջ բերեց մարդու որդանիքմի բիոլոգիական կառուցվածքի և դրա հետ միասին նրա վարժունքների մեջ: Ուղիղ կեցվածքը, քայլերը նախ և առաջ փոխեցին մարդու վողնաշարը, մանավանդ վզի վողնաշարը, հատկապես գանգի ձեր և ծագալականությունը, վորով հնարավորություն ստեղծեց դիմուղեղի մեծ կիսագնդերի գարգացման համար:

Կապված սրա հետ՝ զուրս ցցված զունչը դարձավ տափակ դեմք և կազմվեց կզակը, վորը ծառայում ե այն մկանների ամրացման, վորոնք զեկավաբում են քիմքի շարժումները, այդ մկանները քիմքի (ԱՅՅՈ) կազմի, ատամների դասավորության, կրծքավանդակի փոփոխությունների հետ միասին ստեղծեցին մի ասպարատ, վորը հարմար և հողաբաշխված հնչյունների արտասանության համար:

Աշխատանքի ողնությամբ պատրաստած գործիքների գործունեյությունը փոփոխեց վոչ միայն որդանիքմի կառուցվածքը, այլ և մարդու վարժունքը:

Գործածելով գործիքներ և հնարավորություն ունենալով կենդանիներ սպանելու, մարդն աստիճանաբար խոտակեր կենդանուց դարձավ ամենակեր փորսորդ, վորը միս և ուսում, մի հանդամնքը, վորը կըրճատում ե նրա ժամանակը կշտանալու համար և ապատ ժամանակ թողնում աշխատանքային գործունեյության համար:

Այսպիսով մարդն աշխատանքի միջոցով ազդելով ընության վրա, աստիճանաբար փոխեց նաև իր բնությունը: Հենց նույնիսկ ներկայում մարդն աշխատանքի միջոցով փոխում ե իր մարմնական բնությը՝ փաստ կարող և ծառայել ներկայի արխատոկրատի ինսամքով պահպան նուրբ ձեռքերն ու մարմինը, բուրժուայի լիքը ճարպակալված ֆիզուրան, բանվորի նիհար, մկանոտ մարմինը: Այս բոլորը ցույց ե տալիս,

վոր որդանիքմի բիոլոգիական առանձնահատկությունները մեծապես պայմանավորված են սոցիալական հանդամանքներով:

Աշխատանքը մարդուն դարձրեց վոչ միայն բարձր կարմակերպված կենդանի, այլ և կենդանական խմբակցությունը դարձրեց մարդկային հասարակություն: Նախամարդուն հատուկ ե բնության զեմուայքարելու համար միանալու իր նման եյակների հետ, բայց այդ խմբակցությունը գեռ հասարկություն չեր: Միայն աշխատանքի գործիքները պատրաստելը և աշխատանքի բաժանումը մարդկային նախական խմբերի բաժան մասնիկները միացրեց կոլեկտիվիքմի մեջ, վորի անդամներն իրար հետ կապված են ընդհանուր արտադրական ինտերեսներով: Մարդկային հասարակությունն ամրողնովին աշխատանքի արդյունք է:

Աշխատանքային գործունեյությունը փոխեց մարդու բիոլոգիական բնությը՝ ստեղծելով խոսելու ապարատ, այդ նույն աշխատանքային գործունեյությունը խոսելու ապարատը գործի գրեց: Մարդու կոլեկտիվ աշխատանքին ակամայից ընթացակցվող բացականչությունները սկիզբը զրին այն առանձին հոգաբախված հնչյունների (վլենօրաձելինայի ձեւը), լեզվի այն սկզբնական արմատների, վորոնցից ավելի ու, աշխատանքի բաղմագանությանը և բաւանմանը զուգահեռ, գարդացավ մարդկային լեզուն, վորը սոցիալական հարաբերությունների բարդացման համար մի զորավոր ֆակտոր է:

Լեզվի հետ միասին առաջացավ բառային մտածովությունը, վորը մի անհրաժեշտ միջոց և իդիոլոգիական կառուցվածների համար: Այսպիսով լեզուն և մտածովությունը սոցիալական կարգի յերկություններ են, վոր առաջանում են սոցիալական կյանքի մեջ միայն:

Այս բոլորը ցույց են տալիս, վոր զուտ մարդկայինը, ինչով մարդը տարբերվում է կենդանիներից, սկսած նրա բիոլոգիական առանձնահատկություններից և վերջացրած բանականությամբ, այս բոլորը աշխատանքի, հասարական հարաբերությունների արդյունք են:

3. Մարդկանց հասարական վարմունքը պայմանավորված ե սոցիալական հանգամանեներով. Վոչ միայն իր պատճական գարգացման մեջ և մարդը արդյունք սոցիալական պայմանների, այլև այդ սոցիալական պայմաններին ազդում են հսկայական չափերով նրա առորյա վարչեցողության վրա: Մարդու վրա ազդող ֆակտորներից անձենառւժեղն և տնտեսական գործունեյության այն ձեւը, վորով մարդը բավարարում ե իր կենսական կարիքները:

Վերջնենք նորագույն շրջանի բուրժուայի վարժունքի բնությանը. նա ամեն բան յենթարկել ե իր եղոյիսական սառը հաշվին, բայց, կողքիտ եքսպլոտացիային, ցույց տալով բացարիկ եներգիտ իր շահամու

հնտերեսներին հետեւելու մեջ, ամեն ազատություն փոխված է գնելու և վաճառելու ազատությամբ, մարդկային պատիվը, արժանիքները վեր են ածված դրամի, հաճույքների ձգտումը դառնում և անսահման և հիվանդագին:

Այլ վարմունքի տիպ է ներկայացնում իրենից բանվորը: Զրկված սեփականությունից, աշխատանքի շուկայում դարձած ապրանք և մեքենալի մասնիկ, արտադրության մեջ ուժեղ կոնտրոլի տակ, աշխատավարձը չնշն՝ առնվազ կարիքները հոգալու համար, ահա սոցիալական այն պայմանները, վորոնք նրա մեջ տաելություն են առաջացնում դեպի բուրժուական կյանքի ձևերը:

Բանվորի այս դասակարգային վիճակը նրա մեջ առաջացնում է դասակարգային համերաշխություն, ինտերնացիոնալիզմ, ուստի վերաբերմունք գեպի կյանքի ու բնության յերեւությունը և այլն:

Այսպիսով ամեն մի դասակարգ ունի իր դասակարգային հոգեբանությունը, դասակարգային վարմունքը: Դասակարգային հոգեբանության հետ միասին գոյություն ունի նաև, իրեւ նրա մասնակի արտաշատությունը, պրոֆեսիոնալ հոգեբանություն: Արտադրության մեջ ամեն մի պրոֆեսուսիա մի վորոշ սպեցիֆիկ Փունկցիա յև կատարում է ունի իր սպեցիֆիկ աշխատաձևը, մի հանդամանք, վորն ազդում է այդ պրոֆեսուսիայով զբաղվողի հոգեբանության վրա (որ. Վորակյալ վարպետը, սեագործ բանվորը, գերձակը, չոփերը և այլն):

Տեսնում ենք, վոր հասարակական վորոշ գրուստաների վարմունքը (հոգեբանությունը) պայմանավորված է նրանով, թե ինչ տեղ ունեն նրանք արդյունաբերության սիստեմի մեջ:

Նույն դասակարգի կամ նույն անդամի վարմունքը նման լինելով յուսներին, բայց վորոշ անհատական տարբերություններ ել ունեն, վորը պայմանավորված է սոցիալական այլ յուրատեսակ հանդամանքներով (յուրատեսակ ընտանեկան կյանք, ընկերական շրջան, ընթերցանություն, գյուղի կամ քաղաքի կյանք, անհատական բնույթի դիպագամբներ ու պատահարներ և այլն):

Անհատն իր հետ բերում է բիոլոգիական վորոշ հատկություններ, սոցիալական պայմանները թույլ են տալիս նրանց արտահայտվելու կամ չարտահայտվելու, կամ ձևափոխում են նրանց արտահայտության յեղանակը: Սոցիալական պայմանների չնորհիվ ե, վոր այս կամ այն բնական կարիքները բավարարվում են, կամ չեն բավարարվում. սոցիալական կյանքն ինքը մեջ նորանոր կարիքներ և արթնացնում: Մարդու մեջ կյանքի ընթացքում ստեղծվում են նորանոր սովորություններ ու հմտություններ, վորոնք նոյնպես սոցիալական պայմանների արդյունք են: Գիտակցական բարձր կյանքի բովանդակությունները և պայմանավորված են սոցիալական կյանքի յուրատեսակությունները:

II. ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՏՈՐԻ ԴԵՐԸ

Մարդու վարմունքի այս կամ այն ձևի արտահայտման և անհատական տարբերությունների խնդրում մեծ դեր են խաղում որգանիզմի մեջ գոյություն ունեցող Փիզիոլոգիական մեխանիզմները և առհասարակ ամրող որգանիզմի կառուցվածքը:

Ա. Մարմի կրնակի տարրական կամ այն ձևի արտահայտման և անհատական տարբերությունների խնդրում մեծ դեր են խաղում որգանիզմի մեջ գոյություն ունեցող Փիզիոլոգիական մեխանիզմները և առհասարակ ամրող որգանիզմի կառուցվածքը:

Մարդու ամեն մի մասնակի ուսակցիա չպետք է քննել անկախ, մարդու ամբողջական վարմունքից զատված, վորովհետև ամեն մի զեղությում, նույնիսկ հասարակ մի ուսակցիայի ժամանակ, գործում է ամբողջ որգանիզմը: Յեթե ուսումնասիրության խնդիրը հետացնելու համար քննում ենք այս կամ այն զոկ մեխանիզմը, վորն արթնացնում է այս կամ այն վարմունքը, չպետք է յենթադրենք, վոր այս կամ այն վարմունքի աղբյուրն են կազմում նյարգային սիստեմը, ուղեղը կամ ներքին սեկրեցիայի այս կամ այն զեղը միայն, այլ պիտի ընդունենք, վոր գա արդյունքն է, Փունկցիան է ամբողջ որգանիզմի: Մարդը, ինչպես և ամեն մի կենդանի որգանիզմ, արտաքին ազգեցություններին հականերգործում է իր ամրող եյությամբ, իր բոլոր եկեմնաներով: Դրա համար ել պետք է ծանոթանանք մարդու ամբողջական կառուցվածքի հետ:

Որգանիզմի բիոլոգիական բոլոր հատկությունների միությունը—նրա կառուցվածքն ու ֆունկցիաները միասին առնված՝ կոչվում է մարմի կրնակի տարրական կամ այն հատկանիշները, վորոնք բնորոշում են մարդու արտաքին տեսքը—հասակ, քաշ, ձարպի չերտի և մկանների զարգացումն, մաշկի, մազերի, ատամների, յեղունկների, զեմքի վիճակը և այլն: Մրա վրա պետք է ավելացնել նաև որգանիզմի փունկցիոնալ հատկանիշները՝ արյան շրջանառության, չնչառության, սննդառության, նյարգային սիստեմ, ներքին սեկրեցիան և այլն:

Կոնստիտուցիայի բնորոշման համար չպետք է վերցնել այս կամ այն որգանը, այլ որգանիզմի ամրող ներքին ու արտաքին կողմը, նրա մասերն ու նրանց փոխհարաբերությունը:

Բիոլոգիական հատկանիշների միությունը, վոր կազմում է մարմնի կրնակի տարրական պայմանավորում և մեծապես մարդու վարմունքի հոգեբանության այս կամ այն կերպ լինելը. մարմնի ընդհանուր կառուցվածքի վորպիսությունը նախապայման է վորոշ տեսակի հոգեբանության, չնուց տենդեց և նկատվում մարդկանց զանազան կոնստիտու-

ցիոնալ տիպերի բաժանելու և ամեն մի տիպին վորոշ տեմպերաժենա վերադրելու:

Պետք են նշել, վոր միայն վերջերս և գիտությունը լուրջ ուշադրություն դարձրել մարմնի կոնստիտուցիայի և վարմունքի վրա, դրա համար ել այս խնդիրը գեռ վերջնականորեն պարզված չէ:

Այսպես որինակ, մեծ վեճ գոյություն ունի այն մասին, թե կոնտիտուցիայի տակ ինչ հատկանիշներ պետք են հասկանալ:

Վորմանք կոնստիտուցիայի գաղափարի տակ ուզում են հասկանալ միայն բնածին, ժառանգական հատկանիշները. մարդու կոնստիտուցիան կանխորշվում և բեղմնավորման մոմենտին, նա դրված ե պարզմայի մեջ (Հարտ, Մյուլլեր):

Ուրիշներն ընդունում են, վոր կոնստիտուցիայի գլխավոր գծերը տրվում են ժառանգարար, բայց ընդունում են, վոր բեղմնավորված բրդիջը կարող է այնպիսի աղեղեցությունների յմնթարկվել (սիֆիլիս, ալկոհոլ, տուբերկուլիոզ և այլն), վորոնք կարող են մասամբ ձեռփոխել որդանիզմը:

Եերբորդ տեսակետի վրա կանգնած գիտնականներն այն կարծիքն են, վոր կոնստիտուցիան կազմված է ժառանգական հատկանիշներից, բայց նաև անհատական կյանքում ձեռք բերած փորձի տվյալների թողած աղեղեցություններից (Մարցիուս):

Ըստում ենք, վոր բոլորն ել ընդունում են ժառանգական տվյալների գոյությունը, բայց որգանիզն ապրում ե վորոշ ժամանակի, վորոշ տարածության և փորոշ սոցիալական պայմոնների մեջ, վորոնք աղդում են նույնպես որգանիզմի կառուցվածքի և զարգացման վրա:

Շատերն են փորձել մարդկանց կոնստիտուցիոնալ տիպերի բաժանել, բայց ուշադրության արժանի յեն առայժմ Փրամնսիացի Զիգորի և գերմանացի Կրեչմերի ստորարաժանումները:

ԶԻԳՈՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ.

1. Շնչառական-թեսավերատոր տիպ.—Ուժեղ զարգացած ե կրծքի գանգակը (յերկայնքով) նաև գեմքի այն մասերը, վոր ծառայում են շնչառության: Փորը փոքր, վիզը յերկար, գեմքի միջին մասը (քթի հիմքի և ծայրի միջին տարածությունը) շատ ե զարգացած: Քիթը մեծ, դեմքը լայն ու մեծ. թոքերը լայնածավալ. գեմքի միմիկան խաղում ե գլխավորապես զեմքի միջին մասում և հաճախ կնճիռներ և տալիս. զգայուն հոտառություն ունի: Այս տիպը հատուկ է մի քանի թափառական ցեղերի և յեռնական ժաղովուրդների:

2. Մենդառական դեգեստիվ տիպ.—Հատկապես ուժեղ զարգացած ե գեմքի ներքին միջին միջին տարածությունը. ներքին ծնոտը նկատելի առաջ ե դուրս զալիս: Սրա գեմքը չիշեցնում և պիրամիդ, վորի հիմքը ծնոտն է: Բերանը մեծ է. աչքերը փոքր՝ հասած թերթերունքներով. վիզը կարճ, կուրծքը լայն, բայց նեղ, փորը շատ ուժեղ զարգացած. հակումն ունի ճարպակալելու: գեմքն ել ե արամագի և ճարպակալելու:

3. Միանային-մուսկուլար տիպ.—Գանգի ձեր կանոնավոր, ներդաշնակ. գեմքը լայնով և յերկայնքով մոտավորապես իրար հագասար, մոտավորապես քառակուսի ձեւ ունի. մազերի տակից անցնող գիծը մեծ մասամբ ուղղի և անցնում (ճակատի վերին գիծը): Հոնքերը յերկար են և ուղիղ գիծ են կազմում. մազերը լայլ ե զարգացած, մանավանդ բերինը: Մեջքն ուղիղ, կուրծքը դուրս չի ցցվում: Ուսերը լայն և բարձր. վերջավորությունների (վոտքեր, ձեռքեր) վրայի մլանները ներդաշնակ ձևվագործված:

4. Ուղեղային-ցերերալ տիպ.—Սա ունի քնքույշ և նուրբ գեմք և մեծ զանգ. ճակատը մեծ. աշքերը մեծ, կենդանի արտահայտությամբ ականջների խխունջը նույնպես մեծ. վերջավորությունները կարճ, մանավանդ վոտքերը:

Զիգորն ընդունում է նաև խառը տիպեր՝ մկանա-ոննդառական, ուղեղա-մկանային, ուղեղա-շնչառական և այլն: Նրա կարծիքով ընտանիքների մեջ գերակշռում է այս կամ այն վորոշ տիպը:

Սրա կարծիքով տիպերի բաժանելու հիմքը չափաք և վերցնել այս կամ այն որգանի առանձնահատկությունը, այլ որգանիզմի ամբողջ կազմը և նրա մասերի փոխհարաբերությունը. պետք ե արտաքին և ներքին մարմնակազմի մեջ կազմը և ներգանակություններ նկատվեն: Կրեմերի տիպերի բաժանումը Զիգորից տարբերվում է նաև նրանով, վոր նա տիպերի բաժանելիս ինկատի ունի նաև նրանց հոգեբանական առանձնահատկությունները: Մարդկանց նա բաժանում է յերեք հիմնական տիպերի:

1. Անգետիկ տիպ.—Ունի միջին կամ բարձր հասակ, ուժեղ, բարձրապեր զերու, լայն ուսեր, շատ լավ զարգացած կրծքի վանդակ, վոռները խավ են զարգացած, աչքի յեն ընկնում անրակները, ձեռքի և վոտքի հողերը:

Այս և հաջորդ տիպի (առտենիկ) մարդիկ ունենում են փոփոխական առմագերամենտ, տրամադրության դրայունակ վիճակից արագ անցնում. են սառնության. հոգեկան տեմպը թոփչքավոր և (սկարոօբրազնելի) մաքերի և զգացմունքների մեջ ծայրահեղ են, ունեն վորոշ չափի աններդաշնակ շարժումներ:

2. Աստենիկ տիպ.—Ռւնի միջին հասակ. լզար և, աչքի յե ընկ-
նում նեղ ուսերով, թույլ գարգացած ձեռքերով, յերկար-տափակ կըրծ-
քով, լզար, անձարտ փորով, բարակ-լզար վոտներով:

3. Պիկնիկ տիպ.—Ռւնի միջին հասակ, փափուկ լախ դեմք, կարճ,
մասսիկ վիզ, բարձր, ներքեվում լայնացող կուրծք. մեծ փոք, կարճ
ձեռքեր, մկանները միջին ուժեղությամբ, բայց փափուկ: Տրամադիր և
ճարպակալելու, տարեկ տարեկի անցնելիս քաշի գգալի տատանում-
ներ և ցույց տալիս: Սա հավասարակշռություն և պահում բարձր-ու-
թախ և ընկած-տիսուր տրամադրությունների մեջ, չարժումները ընա-
կան են, հանդիսա, փափուկ: Սովորաբար այս տիպին են պատկանում
խոսել սիրող, ուրախ մարդիկ, հանգիստ յումորիստները, լուս բարե-
հողի մարդիկ, ինչպես և ժիր պրակտիկները:

Բ. ՆԵՐՔԻՆ ՍԵԿՐԵՑԻԱՅԻ ԴԵՐԸ

Մարդու վարմունքի (Հոգեբանության) համար համուկ դեր ու-
նեն յերկու տեսակ մեխանիզմներ՝ նյարդային սիստեմը և ներքին սեկ-
րեցիայի գեղձերը: Այս գեղձերը լինում են յերկու տեսակ՝ անցքա-
վոր, փորոնք թորման-արտազատման համար ունեն արտաքին անցքեր
(որ՝ թքագեղձեր, ստամոքսի գեղձեր, լյարդ, յերիկամունք, մաշ-
կի քրտինքի և ճարպակին գեղձեր) անանց կամ ներքին սեկրեցիայի
գեղձեր, փորոնք թորման, արտազատման համար համուկ արտաքին
անցքեր չունեն:

Ներքին սեկրեցիայի գեղձեր արտադրում են մի վորոշ տեսակի քի-
միական նյութեր, փորոնք կոչվում են սեկրետներ կամ հորմոններ,
սրանք ծծվում են գեղձի մեջ յեղող արյան մեջ և այդ կերպ տարած-
վում ամբողջ մարմնում:

Հորմոնները գրգռում, բարձրացնում են մարմնի զանազան որդան-
ների ֆունկցիան և կամ արգելափակում են: Հորմոնը միացնում, զե-
կալաբում, կոնտրոլի յե յենթարկում որդանիզմի զանազան ֆունկ-
ցիաները:

Հորմոնների մեծ մասի քիմիական բնույթը դեռ հայտնի չե, մենք
միայն գիտենք նրանց առաջացման, նրանց ազգեցության ճանապարհ-
ները և ազգեցության արդյունքները, բայց լրիվ, վերջնական պատ-
կերացում նրանց ֆունկցիաների մասին գեռ չունենք:

Վորքան ել ուսումնասիրությունն այս ուղղությամբ դեռ լրիվ չե,
մասսմբ հակասական, բայց մի բան անկանած կերպով պարզված է,
փոք որդանիզմի գարգացման գործում հորմոնները հսկայական գեր
ունեն: Հորմոններն ազգում են որդանների թե մորֆոլոգիայի և թե
ֆունկցիաների վրա միաժամանակ:

Այժմ պարզված է հետեւյալը.

ա) նյարդային սիստեմի և հորմոնների գործունեյության մեջ այն
ընդհանուր նմանությունը կա, վոր նրանք ազգում են զրգումն և ար-
գելակման (տորմող) ձեվով: Հորմոններն այս կամ այն որդանի կամ
հյուսվածքի գործունեյությունը և աճումն ուժեղացնում են և կամ
թուլացնում:

Ինչպես նյարդային սիստեմի մեջ կան իրար նպաստող և իրար հա-
կագիր ազգող մասեր, այնպես և ներքին սեկրեցիայի գեղձերի սիստե-
մի մեջ կան գեղձեր, վորոնք իրար վերաբերմամբ ներդաշնակ են աշխա-
տում, իրար ուժեղացնում են՝ սիներգիատ գեղձեր (որ՝ վահանաձեվ
և հիպոթիզ գեղձերը), իսկ կան գեղձեր ել, վորոնք իրար հակագում-
նն, իրար արգելում—առորմուզում են, դրանք կոչվում են անտագո-
նիստ գեղձեր: (որ՝ վահանաձեվ և մասն կամ յենթաստամոքսային գեղ-
ձերը):

բ) Ինչպես նյարդային սիստեմի զանազան կենտրոնները միասին
գործունեյության մի սիստեմ են տալիս, նույնպես և ներքին սեկրե-
ցիայի գեղձերի գործունեյությունն իրար հետ կապված մի սիստեմ
և կազմում:

Ենդոկրին (ներքին սեկրեցիայի) գեղձերի նորմալ գործունեյու-
թյունը հիմնվում է գրգռման և արգելափակման մի վորոշ հավասարա-
կշունթյան վրա—սիներգիատ և անտագոնիստ գեղձերն իրար հավասա-
րակշունթյուն են իրենց գործունեյության ժամանակ, յերբ մի գեղձ ուժեղ
և գործում, ուժեղացնում կամ թուլացնում և մյուսին, իսկ մեկի հի-
վանդագին վիճակը մյուսին ել և նույն վիճակի մեջ գցում:

Կամ թե չե, մեկի (գեղձի) թուլացնումն ուժեղացնում և մյուսի գոր-
ծունեյությունն այն գեղքում, յերբ առաջինը վերջինի համար տոր-
մոզի գեր ունի:

Այժմ կտանք այն մի քանի գեղձերի գործունեյության նկարագի-
րը, վորոնք վարմունքի համար համուկ նշանակություն ունեն:

1. ՎԱՐԴԱՐԱՉԱՆԱԿԱՆ ԳԵՂՁԵՐԸ.

Մի խումբ գեղձեր են կոկորդի և արախեայի յերկու կողմերում:
Այս գեղձերը կազմված են վոքրիկ փամփշտիկներից, փամփշտիկը
կազմված և բջիջներից և լիքն և կոլլոյդ հեղուկություն ու գեղձերը շատ
հարուստ են արնատար անոթներով, նրա մեջ են ճյուղավորված սիմ-
պատիկ նյութերը, նաև նյարդային սիստեմի թափառող նյարդը:

Կոլլոյդ հեղուկների մեջ պարունակում են 60 տոկոս յոդ:
Այս կոլլոյդի հորմոնն ազգում է որդանիզմի աճման և գարգացման
վրա: Ազգեցության բնույթը փոխվում է, նայած թե գեղձի գործունե-
յությունն ուժեղացնում է, թե թուլացնում:

Այն յերեխան, վորի վահանաձեւ գեղձը թուլէ, անբավարար է դործում, նկատելի կերպով հետ և մնում նրա աճումը, սննդառությունն անկանոն է լինում, թուլանում է նյարդային գործունեյությունը, թառամածության նշաններ են ցույց տալիս, թուլ է հականերգործում արտաքին գրգիռներին, դժվար է յուրացնում լեզուն և այլ բարդ հմտությունները: Գեղձի գործունեության բուժումը դրական հետեանքներ են տալիս:

Այդ գեղձի անբավարար աշխատանքը մեծերին մեկսիլեմա հիգանդության և հասցնում—ճարպակալում է հիվանդը, ուռչում, ժողովը թափվում են, ուսակցիաները գառնում են թառամած, իսուլը դանդաղում է, անտարբեր ե գառնում գեղի շրջապատը:

Հակառակ ազդեցություն և ունենում այդ գեղձի շատ ուժեղ դործունեյությունը. Հիվանդը ցույց ե տալիս նյարդային սիստեմի բարձր զրգովածություն, քրանում է, զողղողում, շատանում են սրտի գարգերը, չնչառությունն արագանում է. փոփոխական տրամադրություն և ցույց տալիս, աշքերը չոփած են—այս բոլորը բազեդրվյան հիվանդության նշաններ են:

2. ՀԻՊՈԹԻԶ.

Ունի կես գրամ քաշ, գանգում և ուղեղի հիմքում, աեսողական նյարդերի խաչաձեման վրա:

Հիպոֆիզը, ավելի ճիշտ նրա առաջին մասը, վահանաձեւ սինէրգիան է, սա և վահանաձեն ուժեղ կերպով ազգում են կմախքի աճման վրա: Հիպոֆիզի բնական—նորմալ գործունեյության ժամանակ մարդինն աճում է համաչափ, կմախքը զարդանում է բնական չափերով, բնական է զարդանում նաև նյարդային սիստեմը: Սա կապ ունի նաև սեռական գեղձերի հետ. ներքինացումից (կաստրացիա) հետո հիպոֆիզը զարդանում է, վորի հետևանքով աճում է ներքինու հասակը (բարձր), նշանակում է սեռական գեղձերը սրա վրա տորմողող և աղդում:

Հսկա կամ թզուկ հասակը կապ ունի հիպոֆիզի ուժեղ կամ թուլ գործունեյության հետ:

3. ԵՊԻՖԻԶ.

Եպիֆիզ (կօնաձեւ—ՌԱՌԿՈՎԻՃԱՅ) գտնվում է ուղեղի հիմքում, քառաբլուրների առաջին յերկու զույգի վրա: Յերբեմն մանկան մօտ այժ գեղձի գործունեյությունը թուլանում է կամ վոչնչանում է, հետեանքը

յինում է սեռական գործարանների արագ զարգացումը, կմախքը ուժեղ աճում է, մանուկն առհասարակ արագ հասնունանում և սեռապես և մտավորապես, մանուկն այս տեսակետից նման է 17 տարեկան պատճու:

Եսլիֆիզը առըմոզող է ազդում սեռական գեղձերի վրա, նա առհասարակ տորմողող հորմոն և արտադրում և նպաստում, վոր որգանից մը չափավոր, նորմալ և համաչափ զարգանա Փիլիկապես և մտավորապես:

4. ՄԱԿՑԵՐԻԿԱՄԱՅԻՆ ԳԵՂՉ (НАДПОЧЕЧНАЯ).

1855 թվին անզլիացի բժիշկ Ազիսոնը մի նոր տեսակի հիվանդություն և նկատում և նկարագրում. Հիվանդի մկանային ուժը թուլացած է, նյարդային սիստեմը քայլայված, մաշկը բրոնզի գույն ունի, այս հիվանդությունն այնուհետեւ կոչվեց բրոնզի կամ Ադիսոնի հիվանդություն: Վերջերս միայն պարզվեց, վոր զա մակյերիկամային գեղձի անորմալ գործունեյությունը արդյունք է: Այդ գեղձի հորմոնն այժմ արհեստականորեն պատրաստում են, վորն ադրբենալին է կոչվում:

Ազրենալինն ազգում է ներքին որգանիզմի հարթ մկանների, յերակների պատերի և սրտի մկանների վրա: Սրա ազդեցությամբ արտերացին պատերը կծկվում, նեղանում են և արյան ճնշումը մի վորոշ բարձրության վրա յի մնում:

Ազրենալինի ազդեցությամբ յերիկամունքը արյան և մկանների համար անհրաժեշտ չափար և պատրաստում, վորը նրանց շարժման եներգիայի հիմնական աղբյուրն է: Մկանների գործունեյությունն էլ մյուս կողմից նպաստում է, վոր գեղձը հարկավոր քանակի հորմոն արտադրի:

Մակյերիկամային գեղձի նորմալ գործունեյության ժամանակ անհատն ունենում է չափավոր բարձր հասակ, վորոշ չաղություն, դեմքը և մարմինը մաղում և լինում, գիմացկուն և ցրտին, մտավոր և Փիլիքական դիմացկուն և համաչափ գործունեյություն և ունենում:

Գեղձերի անբավարար գործունեյության ժամանակ մարդ ունենում է վոչ բավարար հասակ, լինում է լղար, ունենում է քիչ մազեր, սոր մարմին, մուգ գույնի մաշկ և մտավոր ու Փիլիկական ցածր աշխատառնակություն:

5. ՍԵՐԱԿԱՆ ԳԵՂՁԵՐ (ԱՄՈՒՋԻՔ ՅԵՎ ԶՎԱՐԱՆ) .

Այս գեղձերով են պայմանավորվում տղամարդու և կնոջ սարքերությունը :

Ներքինացումը (կաստրացիա) չի ազդում հասակի վրա, բնդհակառակն հասակը բարձրանում է, մարդը ճարպակալում է, զլիի մաղերը լավ են աճում, գեղինը և մարմնինը՝ վատ, կոկորդի զարգացումը կանգ ե առնում, ուստի և ձայնը մանկական ձայնի յի նմանում. աշխատունակ ե և բնավորությամբ հանգիստ, մտավոր գործունեյությունն առանձնապես չի փոխվում :

Կաստրացիայի հետեանքով մի սեռ ձեռք և բերում մյուս սեռի յերկրորդական հատկանիշները. կանայք ձեռք են բերում տղամարդու գեղը՝ ձայնը, հասակը, մարմնի վորոշ մասերը և տաղի կառուցվածքը փոփոխվում են: Տղամարդը իր ձայնով և ճարպակալությամբ նմանվում է կնոջ:

Ներքինացման հետեանքով մարդկանց վարժունքի մեջ ել են փոփոխություններ մտնում, բացի այդ, փոփոխության և յենթարկվում նաև մյուս գեղձերի գործունեյությունը:

Շտայնախի փորձերը ցույց տվին, թե սեռական հորմոնները ինչպիսի հեղափոխող աղղեցություն են թողնում մարմնի վրա (եղնարու և արոմե-եղ զարձնելու փորձերը): Այս հիմնական փոփոխությունների մեջ գեր չունի նյարդային սիստեմը, դրանք հետեանք են միմիայն չորմոնների գործունեյության:

Սեռական հորմոններն ազդում են վոչ միայն մարմնի կոնստիտուցիայի, այլև անհատի վարժունքի վրա՝ նրան դարձնելով սեռապես անզուսպ կամ չափավոր:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ենդոկրին սիստեմը (ներքին սեկրեցիան) ազդում է մարմնի կոնստիտուցիայի և նրա որդանների փունկցիաների վրա նորմալ կամ անհորժալ կերպով:

2. Ազդում է որգանիզմի վարմութիւնի—հոգերանության վրա՝ դարձնելով անհատին՝ շարժույթ, աշխատունակ, մտավորապես ընդունակ, ինքնարավական, սեռապես զուսպ, կամ՝ նյարդային, անհորժալ չափերով շարժուն, դանդաղկոտ, թառամած, զուրկ կենսական ևներգիայից, շուտ հոգնող, մտավորապես անընդունակ, սեռապես անզուսպ և այլն:

3. Ենդոկրին գեղձերը չուկ չեն գործում, այլ ազդում են իրար վրա՝ իրար գործունեյություն ուժեղացնելով կամ թուլացնելով, մեկի գործունեյությունը կախված է մյուսի գործունեյությունից: Նրանց գործունեյությունը մի սիստեմ է կազմում, ինչպես նյարդային սիստեմի գործունեյությունը: Գեղձերի գործունեյության վրա ազդում են ներքին և արտաքին բաղմազան պայմաններ, ուրեմն նա փոխադրեցության մեջ և որդանիզմի մյուս մասերի հետ:

4. Առաջին հերթին գեղձերի գործունեյությունը կապված է նյարդային սիստեմի հետ, վորի վրա նա ազդում է. որ. սեռական գեղձերը, վահանաձեռ գեղձը, հիպոֆիզն ազդում են նյարդային սիստեմի վրա:

5. Նյարդային սիստեմի այս կամ այն մասը ազդում է գեղձերի վրա, որ. ուղեղի վերին կոկորդային նյարդը պատճառ է դառնում, վոր վահանաձեռ գեղձի սեկրեցիան ուժեղանա, յերկարաձիգ ուղեղին ազդում և մակյերիկամային գեղձի վրա, վորի հորմոնի արտադրությունը շատանում է:

Այս և այլ վիաստեր ցույց են տալիս, վոր նյարդային սիստեմի և գեղձերի մեջ գործություն ունի փոխազդեցություն: Հայտնի մասնագետ Զոնդերի կարծիքով գեղձը գրգիռներ և ստանում ուղեղից և ինքն ել ազդում և նրա վրա:

6. Ենդոկրին սիստեմի (ներքին սեկրեցիայի գեղձերի) կապն ավելի սերտ է վեգետատիվ նյարդային սիստեմի հետ, չի կարելի սրանց փունկցիաներն առանձնացնել իրարից: Հայտնի մասնագետ կրառու հորմոններ անվանում ե վեգետատիվ նյարդային սիստեմի «ձիթելույզ»: Վեգետատիվ նյարդային սիստեմը զեկավարվում է արնատար անթների պատերի, ստամոքսի, աղիքների, միզափամփուշի, զավակատան, սրտի մկանների գործունեյությունը, ինչպես և քրտինքի, թքի, արցունքների գեղձերի գործունեյությունը և այլն:

Ներքին այս որգանների գործունեյությունը կախված է վեգետատիվ նյարդային սիստեմից, իսկ սրտ գործունեյությունն ել գեղձերից: Յեթե գեղձերը նորմալ չեն գործում, վեգետատիվ նյարդային սիստեմի գործունեյությունն անհորժալ չափերով ուժեղ է լինում կամ թուլ. որ. բազեղովյան հիվանդության ժամանակ սրտի զարկերի արագացումը, քրտինքը, աչքի խնդորների չովածությունը, Աղիքնի կամ Բրոնյա հիվանդության ժամանակ թառամածությունը, մկանային թուլությունը հետեանք են հորմոնի (մակյերիկամային) քչության:

Անուական հորմոնը ևս ազդում է նյարդային այս սխտեմի վրա, մանավանդ կանանց մոտ. որ. հղության ժամանակ թքի թորումը, սիրտ խառնելը, կամ մենստրուացիայի ժամանակ արյան հոսանքի ուժեղացումը գեղի վրուխը, սրտի բարախման ոիթմի խանդարումն և այլն:

7. Հորմոնների (գեղձերի) վրա ազդում են նաև արտաֆիս գրգիռները. գեղձերը թեև ժամանական լաբորատորիաներ են, բայց ազդում են անհատական փորձից:

ա) Առաջին տեղն ե բունում սևունդը, վարի վիտամիններից են կազմում հորմոնները:

բ) Ազդում են նաև բնակարանը, լույսը, տեմպերատորիան, խոնավությունը:

գ) Ազդում են նաև տեղը (բարձր տեղերում տարածված է վահանական գեղձի հիվանդությունները—Ալպեր, Տիրու, Կովկաս, Կարպատները) հողն ու ջուրը, ջրի միջոցով ստացված վորոշ նյութեր ազդում են վորոշ գեղձերի վրա:

դ) Ազդում ե նույնական ացիալական կյանքը. նյարդային սխտեմն ազդում ե գեղձերի վրա, իսկ սոցիալական կյանքը մեծապես ազդում է նյարդային սխտեմի վրա:

Ճնշված և զրական ինքնազգացումը տարբեր և ազդում գեղձերի գործունեյության վրա:

Գ. ՆՅԱՐԴԱՅԻՆ ՍԻՍՏԵՄ

1. ՆՅԱՐԴԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Մարդկային վարմունքի, հոգեկան ավրումների համար հատուկ նշանակություն ունի նյարդային սխտեմը, վարի զլխուզեղի յերկու կիսագնդիկների գործունեյությամբ և պայմանավորված դիտակցական կյանքը:

Նյարդային սխտեմը կարգավորում է որգանիզմի փոխհարաբերությունը չրծապատճի հետ: Որգանական մատերիան արտաքին դրգիներից կարող և ազդվել նաև առանց նյարդային սխտեմի. այս փաստներով իմաստական կեղանակով ապացուցեց Ժ. Լորը. նա հետաքրեց առցիպայի մարմնից (անվողնաշար բագմարջիջ կենզանի) նյարդային հանդույցը և այնուհետև նկատեց, վոր ոպերացիայի յենթարկված և նույն տեսակի նորմալ կենզանին տարբեր գրգռականություն ունին, վարպեսզի ոպերացիայի յենթարկված ասցիդայի մկանը կծկվի, պետք է


8 անգամ ավելի ուժեղ գրդիռ տրվեր, քան նորմալ ասցիդային: Եյարդային սխտեմը հնարավորություն և տալիս կենդանուն, վոր ավելի արագ ազդվի գրգոք, ավելի քույլ գրգուց տպավորվի և ավելի ճշգրիտ և դիմֆերենցիայի յենթարկված նրբին ուսակցիաներ կատարի և հարմարվի շրջապատի և իր որգանիզմից յեկող գրգիռներին: Եյարդային սխտեմը բարձրացնում և որգանիզմի գրգռականությունը և ուսակցիաները կատարելու ընդունակությունը: Վերջին չրծանի ուսումնակությունները ցույց են տվել, վոր նույնիսկ միարջիջ կենդանիների վորոշ տեսակներ նյարդամոտորական շատ պարզ կառուցվածքի կենտրոն ունին:

